«ՀԱԷԿ» ՓԲԸ-ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-26/24-03/64 – 04 - 063

ք. Մեծամոր «12» 11 2024թ.

«ՀԱԷԿ» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրենի տեղակալ–ընդհանուր հարցերի գծով տնօրեն Սամսոն Մաթևոսյանի, որը գործում է **գլխավոր տնօրենի կողմից 06.05.2024թ. տրված լիազորագրի հիման վրա** (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից,

և **ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ը,** ի դեմս տնօրեն Ս. Աթոյանի, որը գործում է **ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողության** ծառայության մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարան ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը :

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **264400 (երկու հարյուր վաթսունչորս հազար չորս հարյուր)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, պայմանագրի (գործարքի) վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետում (Հիմք՝ ՀՀ կառավարության 17 մարտի 2022 թվականի N 319-Ն որոշում):

5.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 12 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 1.1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	**ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ**
0910, ք. Մեծամոր, Արմավիրի մարզ,	ք.Երևան, Մ. Հերացի 12
Հ/Հ 1930000199200100	**ՀՎՀՀ** 02625503,
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ, ք. Երևան,	«Կենտրոնական գանձապետարան»
ՀՎՀՀ 04401874,	**Հ/Հ** 900018004649
Հեռ./ֆաքս՝ 28-18-80, 28-06-69,	**Հեռ.՝** 093503550,
Հեռ.՝ 20-04-91,	**E-mail**: *armavir@ncdc.am*
E-mail: anpp@anpp.am	
..... **Ս. Մաթևոսյան**	..... **Ս. Աթոյան**
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
« 12 » 11 2024թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-26/24-03/64 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության								
չ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ընդհանուր գինը/ՀՀ դրամ	Միավորի գինը (դրամ)	ընդհանուր քանակը	մատուցման հասցեն	մատուցման ժամկետը
1	73111200	1. ՀՀ առողջապահության նախարարության հրաման № 2-III-Ա2-1 2. Նորմաներ և կանոններ «Խմելու ջուր: Ջրամատակարարման կենտրոնացված համակարգերի ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» 3. СНиП 3.05.04-85 4. «Методические указания по санитарному контролю и технической эксплуатации водопроводов с подземными источниками водоснабжения» Москва 1982 Հսկողությունն իրականացվում է յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ համաձայն կից ներկայացված ՀԱԷԿ» ՓԲԸ **գլխավոր ճարտարագետի կողմից առ 07.10.2024թ. հաստատված ծավալաթերթի:** * Ծառայություն մատուցողը պետք է ունենա նմանատիպ ծառայություն իրականացնելու համար համապատասխան թույլտվություն (խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողության գործունեության լիցենզիա) և հետազոտություններ կատարելու համար անհրաժեշտ տեխնիկական միջոցներ:	ռեկտոր	**264400**	66100	4	**Արմավիրի մարզ ք. Մեծամոր, «ՀԱԷԿ» ՓԲԸ**	**2025 թվականի հունվար÷դեկտեմբեր ամիսների ընթացքում**

Լրացուցիչ պայմաններ՝
Ծառայությունը մատուցել ըստ անհրաժեշտության (չօգտագործված մասով պայմանագիրը կլուծվի) համաձայն հավելված 1.1.1, որի հիմքում ընկած է ՀԱԷԿ» ՓԲԸ **գլխավոր ճարտարագետի կողմից առ 07.10.2024թ. հաստատված ծավալաթերթը:**
1. Վճարում կկատարվի փաստացի մատուցված ծառայությունների (իրականացված մշտադիտարկումների) հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա:

Ծանոթություն՝ Պայմանագրի կառավարիչ Ա. Գրիգորյան, հեռ. 010282960, E-mail: ashot.grigoryan@anpp.am

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀԱԷԿ» ՓԲԸ	ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ
.... Ս. Մաթևոսյան	.... Ս. Աթոյան
Կ.Տ	Կ.Տ

*«Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ * 04401874 * Մեծամոր*

Հավելված N 1.1
«12» 11 2024թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-26/24-03/64 ծածկագրով պայմանագրի

[redacted]

«Հաստատում եմ»
ՀԱԷԿ գլխավոր ճարտարագետ
Ա.Ռ.Գրիգորյան
04 10 2024թ.

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

«Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն, մանրէաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտություն» աշխատանքների կատարման

h/h	Ծառայության անվանումը	Չափի միավոր	Քանակը	Ծանոթություն
1.	**Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն**			
1.1	**Խմելու ջրի մանրէաբանական ցուցանիշների հետազոտություն՝**			Ընդամենը 3 հետազոտություն
1.1.1	Խմելու ջրի նմուշում մանրէների ընդհանուր թվի որոշում	հետազոտություն	1	
1.1.2	Խմելու ջրի նմուշում ընդհանուր կոլիձև մանրէների հայտնաբերում	հետազոտություն	1	
1.1.3	Ջրի նմուշում ջերմատոլերանտ կոլիձև մանրէների հայտնաբերում	հետազոտություն	1	
1.2	**Խմելու ջրի սանիտարաքիմիական հետազոտություն՝**			Ընդամենը 17 նմուշ և հետազոտություն
1.2.1	Ջրի նմուշի հոտի քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.2	Ջրի նմուշի համի քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.3	Ջրի նմուշի գույնի քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.4	Ջրի նմուշի պղտորության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.5	Ջրի նմուշի (PH) քիմիական հետազոտություն պոտենցիոմետրիկ մեթոդով	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.6	Ջրի նմուշի մնացորդային ազատ քլորի պարունակության քիմիական հետազոտություն 1	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.7	Ջրի նմուշի պերմանգանատային օքսիդացման քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.8	Ջրում երկաթի պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.9	Ջրում ամոնիում իոնի պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.10	Ջրում նիտրատների պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.11	Ջրում նիտրիտների պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.12	Ջրում քլորիդների պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.13	Ջրում սուլֆատների պարունակության քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.14	Ջրում հանքայնացման/չոր մնացորդի քիմիական հետազոտություն	նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.15	Ջրում կոշտության քիմիական որոշում	նմուշ/ հետազոտություն	1/1	

1.2.16	Ջրում ֆտորիդների պարունակության քիմիական հետազոտություն	Նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.17	Ջրում կալցիումի, մագնեզիումի պարունակության քիմիական հետազոտություն տիտրիմետրիկ մեթոդով	Նմուշ/ հետազոտություն	1/1	
1.2.18	Լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում	Եզրակացություն	1	

Խմելու ջրի մանրէաբանական, մակաբուծաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտություններն անհրաժեշտ է կատարել նշված ծավալով, եռամսյակը մեկ անգամ և արդյունքները տրամադրել պատվիրատուին:

ԳՃՏ շահագործման գծով Գ.Խ. Խլղաթյան

ԱՏԲ պետ Ա.Ա. Մկրտչյան

ՋՍՀԱպետ Վ.Պ.Մկրտչյան

Հավելված N 1.1.1
«12» 11 2024թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-26/24-03/64 ծածկագրով պայմանա

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ

««ՀԱԷԿ» ՓԲԸ-ի Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն, մանրէաբանական և սանիտարաքիմիական ցուցանիշների հետազոտություն» աշխատանքների կատարման:

h/h		Աշխատանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Ծանոթություն	Ընդամենը
1.		**Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն**				
1.1		**Խմելու ջրի մանրէաբանական ցուցանիշների հետազոտություն**				
1.1.1	6	Խմելու ջրի նմուշում մանրէների ընդհանուր թվի որոշում	1 հետազոտություն	4	1100	4400
1.1.2	7	Խմելու ջրի նմուշում ընդհանուր կոլիձև մանրէների հայտնաբերում	1 հետազոտություն	4	2300	9200
1.1.3	8	Ջրի նմուշում ջերմատոլերանտ կոլիձև մանրէների հայտնաբերում	1 հետազոտություն	4	1200	4800
1.2		**Խմելու ջրի սանիտարաքիմիական հետազոտություն**				
1.2.1	54	Ջրի նմուշի հոտի քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	600	2400
1.2.2	55	Խմելու ջրի նմուշի համի քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	800	3200
1.2.3	56	Ջրի նմուշի գույնի քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	2300	9200
1.2.4	57	Ջրի նմուշի պղտորության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1200	4800
1.2.5	58	Ջրի նմուշի PH-ի քիմիական հետազոտություն պոտենցիոմետրիկ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3100	12400
1.2.6	59	Ջրի նմուշի մնացորդային ազատ քլորի պարունակության քիմիական հետազոտություն 1	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1400	5600
1.2.7	62	Ջրի նմուշի պերմանգանատային օքսիդացման քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	800	3200
1.2.8	69	Ջրում երկաթի պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	8400	33600
1.2.9	71	Ջրում ամոնիում իոնի պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	2700	10800
1.2.10	72	Ջրում նիտրատների պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3900	15600
1.2.11	73	Ջրում նիտրիտների պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3700	14800
1.2.12	74	Ջրում քլորիդների պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6500	26000

1.2.13	75	Ջրում սուլֆատների պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	3200	12800
1.2.14	76	Ջրում հանքայնացման /չոր մանցորդի քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	7500	30000
1.2.15	77	Ջրում կոշտության քիմիական որոշում	1 նմուշ / 1 հետազոտություն	4	1700	6800
1.2.16	79	Ջրում ֆտորիդների պարունակության քիմիական հետազոտություն	1 նմուշ / 1 հետազոտություն	4	6300	25200
1.2.17	89	Ջրում կալցիումի, մագնեզիումի պարունակության քիմիական հետազոտություն տիտրիմետրիկ մեթոդով	1 նմուշ / 1 հետազոտություն	4	4400	17600
1.2.18	217	Լաբորատոր-գործիքային հետազոտությունների արդյունքների հիման վրա եզրակացության տրամադրում	1 եզրակացություն	4	3000	12000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ս. Աթոյան
Կ.Տ

Հավելված N 2
«12» 11 2024թ. կնքված
ՀԱԷԿ-ՄԱԾՁԲ-26/24-03/64 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հ/հ	Միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման	Ծառայության անվանումը	Չափման միավորը	Ընդհանուր քանակը	Միավոր գինը (հազար դրամ)	Վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ. ըստ ամիսների, այդ թվում				Գումարը (հազար դրամ)
						I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
1.	73111200	**Խմելու ջրի որակի հիգիենիկ պահանջների հսկողություն**	լրակազմ	4	66100	66100	132200	198300	264400	**264400**
									ԸՆԴԱՄԵՆԸ	**264400**

***Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
«ՀԱԷԿ» ՓԲԸ

Ս. Մաթևոսյան
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՆ «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ

Ս. Աթոյան
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը

պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն